# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 18.02.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՊՁԲ-19/1>> գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Չարենցավան <<29>> 11 2019թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Գնորդ>>, մի կողմից, և <<ՎԱՐԱԼ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Սեյրանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Վաճառող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 18.02.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՊՁԲ-19/1>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ, 8.6-րդ կետերը, <<ՎԱՐԱԼ>> ՍՊԸ-ի կողմից 29.11.2019թ.-ին ներկայացրած թիվ 3846/04 գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 18.02.2019թ. կնքված N <<ՉՀ-ԳՀԱՊՁԲ-19/1>> գնման պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները երկարաձգել և վերջնաժամկետ սահմանել մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| <<ԳՆՈՐԴ>> | <<ՎԱՃԱՌՈՂ>> |
|---|---|
| **Չարենցավան համայնք** | **<<ՎԱՐԱԼ>> ՍՊԸ** |
| **ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1** | **ք. Չարենցավան 4-րդ թաղամաս 11 շենք 53 բնակարան** |
| **ՀՀ ՖՆ ԳՎ** | **<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ** |
| **Հ/Հ 900132130049** | **Հ/Հ 16028025464200** |
| **ՀՎՀՀ 03022497** | **ՀՎՀՀ 03023361** |
| | **էլ. հասցեն seyranyan76@inbox.ru** |
| | **Հեռ. (094) 00-34-00** |
| **Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահգալդյան** | **Տնօրեն՝ Ա. Սեյրանյան** |
| **(ստորագրությունը)** | **(ստորագրությունը)** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |